ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

Անդրկովկասեան երկաթուղու գործունէութիւնը.—Թիֆլիսի դումայի կուսակցութիւնները.—Հայկական թատրոն.—Սովը Ռուսաստանում.—Փոփոխութիւններ Էջմիածնի Սինոդում.—Նեղումը հայ լուսաւորչականների համար.

«Մուրճ»-ի ընթերցողներից նոքա, որոնք հետեւում են այս ամսագրին սորա գոյութեան սկզբնական տարուց, թերևս յիշում են թէ որքան ջերմ խօսքերով ես ողջունեցի այն ակտը, որով Անդրկովկասեան երկաթուղին՝ մասնաւոր կապիտալիստների ընկերութեան ձեռքից անցաւ տէրութեան ձեռքը, որով նա մասնաւորից դառաւ տէրունական, պետական և կամ ինչպէս ռուսները սիրում են ասել՝ գանձարանական (казенный)*. Այդ մասին ես յղում եմ ընթերցողներին «Մուրճ»* 1889 *թ.* № 9, *ուր ընդհանուր գծերով պատմած է երկաթուղիները պետական դարձնելու գաղափարի զարգացումը Արեւմտեան Եւրոպայում և Ռուսաստանում, որի արտայայտութիւններից մէկն էր նաև մեր երկրի երկաթուղու անցնելը տէրութեան ձեռքը* 1889 *թ. օգոստոսի* 1*-ին.*

Ի միջի այլ պատճառների, որոնց համար հասարակական տեսակէտից աւելի լաւ է որ երկաթուղիները մասնաւորների ընկերութեան ձեռքում չը լինեն, պէտք է յիշել և այն, որ լաւ տէրութեան ուշադրութիւնը երբէք չի կարող այնքան կլանուած լինել երկաթուղուց ստանալիք զուտ օգուտների դիտումներով, որքան մասնաւոր ընկերութիւնները, որոնք միմիայն շահադիտական տեսակէտից կարող են նայել իրանց ձեռնարկութիւնների վերայ. Բայց երկաթուղին, որպէս հաղորդակցութեան միջոց, այն աստիճանի հասարակաց շահ է ներկայացնում, այն աստիճանի նա շօշափում է երկրի տնտեսական բարօրութիւնը, նա այնքան ընդհանուր *նշանակութիւն ունի, որ մեծապէս ցանկալի է նաև որ նա լինի այնպիսի օրգանների ձեռքում, որոնք ալպէս ասած՝ առի պաշտօնէ պարտաւորուած են իրանց ձեռքում եղած գործերի վերայ ընդհանուր շահերի և ոչ միայն զուտ արդիւնքների տեսակէտից նայել. Այդպիսի օրգաններից մէկը և գլխաւորն է.*

տէրութիւնը, որպէս հասարակաց գործերի օրգան։ Եւ այդ տեսակ գործե-րում, տնտեսական-հասարակական խնդիրներում, մամուլի ձայնը շատ աւելի հեշտ հասնում են տէրութեան քան մասնաւոր ընկերութիւնների ականջին, որոնք իրանց էգօիստական շահերից դէն դժւար թէ ուրիշ բանի ականջ դնելու տրամադրութիւնն ունենան։

Այսպէս կամ այնպէս, բայց ահա մեր առաջը դրած «Հաշիւ Անդր-կովկասեան երկաթուղու շահագործութեան 1890 թւականին» (Отчетъ по эксплоатаціи Закавказской желѣзной дороги за 1890 г.)։ Պարզ է թէ Անդրկովկասեան երկաթուղին ինչ մեծ փաստ է մեր երկրի գործարա-նական և գիւղատնտեսական գործունէութեան համար, քանի որ նա գրեթէ միակ կենդանի երակն է հանդիսանում երկրի բերքերի փոխանակութեան համար թէ ներքին, թէ ռուսական և թէ արտասահմանեան շուկանե-րում։ Այդ իսկ պատճառով Անդրկովկասեան երկաթուղու գործունէութիւ-նից կարելի է մինչ մի չափով ստոյգ դատել երկրի արդիւնաբերու-թեան չափի և նորա ցոյց տալու, բաշխման կամ բաժանման մասին. իսկ մեր արդիւնաբերական կանոնաւոր ստատիստիքայի պակասութեան պատ-ճառով երկաթուղային հաշիւները աւելի ևս մեծ նշանակութիւն են ստանում։ Դժբաղդաբար նորերս հրատարակւած և մեր ձեռքն ընկած հաշիւը այդ ամենի մասին լիակատար և որ գլխաւորն է՝ ամփոփ տեղեկութիւններ չի տալիս։ Դա մի ահագին հատոր է 218 թերթից բաղկացած, որը ներկա-յացնում է մեծ կոյտ հում, անմշակ տեղեկութիւնների ապրանքներ՝ առաք-ման մասին, առանց ցոյց տալու նոյն ապրանքները, թէ որտեղից են նոքա բարձւած, և ուր են մեր բերւած։ Այնպէս որ ղուր կը լինէր այստեղ որոնել տեղեկութիւններ իւրաքանչիւր նահանգի համար առանձին։ Ճիշդ է որ հաշւի մէջ կայ ցուցակ «ուղարկւած կայանից ուղարկւած» ուղարկւած և վայր բերւած ապրանքների, բայց այդ ուղարկւածները շատ են մեծ, որ-պէս զի կարելի լինի ամեն կէտի համար առանձին թւեր դուրս բերել։ Այդպիսի ուղարկումներից է Թիֆլիս-Բաքու, նոյանից է Կովկաս-Բաթում. որպէս տեսնում էք՝ շատ մեծ տարածութիւններ, մանաւանդ որ մեր երկ-րում այդպիսի տարածութիւնների վերայ շատ զանազան արդիւնաբերու-թիւններ կան։

Բայց հաշիւը մեզ գոնէ ընդհանուր թւեր է տալիս, որոնք շատ ու-սանելի են։ Ես կ'աշխատեմ այստեղ դուրս բերել այն թւերը, որոնք աւելի ընդհանուր նշանակութիւն ունին։

1890 թւականին Անդրկովկասեան երկաթուղին տարել է ամեն տե-սակ բեռներ, ընդամենը. . . . . 118,617,417 փութ [1])

---

[1]) Մեր արտասահմանեան ընթերցողների համար (Մ.Ա.) հարկաւոր լինի ասել որ մի փութը=10 ֆունտ կամ 40 գրւանքայ=$16^2/_5$ կիլօգրամ։

Այդ թիւը կազմող բեռներն են՝

Զինուորական բեռներ.	519,503	»
Երկաթուղու վարչութեան բեռներ	22.516.548	»
Կենդանիներ	79,154	»
Հատով առարկաներ	7.400	»
Մասնաւորների բեռներ.	95.494.812	»

Դոցանից դուրս է գալիս, որ մասնաւորների բեռները կազմում են ընդհանուրի 80°/₀։ Եւ պէտք է ասած, որ հէնց այդ բեռների քանակութիւնը տարէցաարի աճել է, և այն՝ զդալի չափսերով. քանի որ 1887 թ. նոյն բեռների քանակութիւնն էր միայն 60 միլիոն, 1888-ին՝ 70 միլիոն, 1889-ին՝ 88 միլիոն, իսկ 1890-ին մօտ 95¹/₂ միլիոն պուդ։

Այժմ տեսնենք թէ ինչ տեսակ բեռներ են եղել և ամեն տեսակից որքան։

Առաջին տեղը բռնել են կերոսինը (45.306.027 պ.) և առհասարակ նաւթային արդիւնքները. այն է ընդամենը . . 52.762.488 պուդ

Երկրորդ տեղը բռնել է մարդանեց սև քարը. . . 12,093.659 »

Երրորդ տեղը՝ երկրագործական բերքերը . . . . 9.165,172 պուդ. որի մէջ հացահատիկներ եղել են 5.147,085 պ., սորա մէջ եգիպտացորենը (կուկուրուզ, սիմինդրի) 2.486.354 պ., ցորեն 1.061.102 պ., գարի 936,796 պ., հաճար (рожь) 625,679 պ., այլ սերմեր՝ 37,153 պ., բրինձ 1,022.098 պ. (որից երևի ⁴/₅ Պարսկաստանից և Անդրկասպեան երկրից), ալիւր 1,469.432 պ., մրգեր՝ 631.788 պ.

Չորրորդ տեղը բռնում են քարերը.	2,180,560	»
Հինգերորդը՝ շաքարը	1.655,659	»
Վեցերորդը՝ վառելափայտը	1.624,708	»
Եօթներորդը՝ երկաթը	1.218,245	»
Ութերորդը՝ շինութիւնների փայտեայ նիւթերը. .	1.046,285	»
Իններորդը՝ հողը	1,042,501	»
10-րդ՝ բամբակը, (որից երևի կէսը Անդրկ. երկր.).	935,902	»

որի մէջ նաև Անդրկասպեան երկրից եկած անցկացածը

11-երորդ՝ աղը	874,568	»
12-երորդ՝ մատուտակ (солодковый корень, բիան)	872.561	»
13-երորդ՝ քարէածուխ (Ցկիբուլի և Ռուսաստանի)	696.174	»
14-երորդ՝ գինի.	689.815	»
15-երորդ՝ խոտ	482,367	»
16-երորդ՝ բուրդ	381.429	»

Ես այս թիւերը առաջ բերեցի նախ հէնց իրանց հետաքրքրութեան պատճառով, նոցա մանրամասն ուսումնասիրութիւնը սակայն ինձ չէ պատկանում։ Բայց ես այստեղ կը շոշափեմ միայն մի քանի կէտեր, որոնց հա-

սարակաց նշանակութիւնը անկասկածելի է. համեմատութիւնների համար օգտւելով նոյն նիւթերի մասին տպւած յօդւածներից ուրիշ թերթերում։

Բանը սա է որ Անդրկովկասեան երկաթուղին Ռուսաստանում գոյութիւն ունեցող բոլոր 54 թէ տէրունական և թէ մասնաւոր երկաթուղիների շարքում կարելի է ամենաարդիւնաւորներից մէկը համարել։ Այդ երկաթուղին աղքատներից և անարդիւնաւէտներից չէ ոչ իւր շարժական կազմի և ոչ նորա շահագործութեան ֆինանսական հետևանքների կողմից։ Շոգեկառքերի և վագոնների թւով (որ և կազմում են շարժական կազմը) Անդրկովկասեան երկաթուղուց միայն երկուսն են աւելի հարուստ ամբողջ Ռուսաստանում՝ Նիկողայոսեանը (Պետերբուրգ-Մոսկւա) և հարաւ-արևմտեանը (Մոսկւա-Խարկով-Օդեսա). Անդրկովկասեանը 1890 ին ունէր 312 շոգեկառք (լոկոմոտիւ) և 8,872 վագոն. ճիշդ է, որ այդ վագոններից կէսի չափ պատկանում էր մասնաւոր անձերին, բայց շատ շուտով այդ մասնաւորների վագոնները անցնելու են տէրունական գանձարանը։ Միմիայն ճամբորդական վագոնների թիւը միւս երկաթուղիներից շատ սակաս էր՝ 246 հատ, որոնցից միայն 200-ի չափ վագոն պիտանի են եղել բանելու համար։

Նոյնպէս ֆինանսական հետևանքների կողմից Անդրկովկասեան երկաթուղին առաջիններից մէկն է, քանի որ միմիայն Նիկողայոսեան և հարաւ-արևմտեան երկաթուղիները ստանում են նորանից աւելի ընդհանուր եկամուտ, իսկ զուտ եկամուտի կողմից 12 երկաթուղիներ միայն նորանից գերազանց են։

1890 թւականին Անդրկովկասեան երկաթուղու շահագործութիւնից ստացւել է ընդհանուր եկամուտ 14,885,643 ռուբլի, որից զ ո ւ տ ա ր դ ի ւ ն ք կամ զուտ օգուտ մնացել է 8,307,316 ռ., քանի որ ծախք եղել է միայն 6.578.329 ռուբլի և դեռ այդ ծախքերի մէջ մտնում են հաշիւները նախկին ընկերութեան հետ, վարձատրութիւններ նախկին ընկերութեան վարչութեան անդամներին և այլն։ Նախկին ընկերութեան ժամանակ ծախքերը աւելի մեծ էին, այնպէս որ տէրութեան ձեռքն անցնելու առաջին հետևանքներից գլխաւորն եղաւ՝ ծախքերի նւազումը՝ համեմատած ընդհանուր արդիւնքի հետ։ Բայց հէնց այստեղ և եթ պէտք է ասել, որ այն 8 միլիոն ու երեք հարիւր հազար ռուբլուց տէրութեան գանձարանը վճարում է երկաթուղու արժողութեան գումարի տոկոսները և պարտքաշէջը։ Արդ առ 1-ն յունւարի 1890 թ. երկաթուղու արժողութիւնն էր թուղթ փողով 160,359,000 ռուբլի, որի տոկոսները և պարտքաշէջը տարեկան կազմում են 5,757.339 ռ. 50 կոպէկ, այնպէս որ այն 8 միլիոն ու 300 հազար ռուբլուց մնում է ազատ 2,549,976 ռ. 57 կոպէկ։

Այդ արդէն մեծ բան է, երբ ամեն տեսակ ծախքեր և արժողութեան տոկոսը և պարտքաշէջի վճարները դուրս գալուց յետ, տարւայ վերջը դեռ տակը մնում է $2^1/_2$ միլիոն ռուբլի միանդամայն ազատ գումար։

ինչ կարելի է անել այդպիսի նպաստաւոր հանգամանքների մէջ։ Ահա խնդիրը։ Դրան պատասխանելու համար պէտք է աչքներս դարձնենք երկաթուղու տարիֆի վերայ։ Եւ այստեղ ահա կը գտնենք, որ փոփոխելու շատ բան կայ։ Անդրկովկասեան երկաթուղու տարիֆով տրանսպորտի գները զարմանալի թանկ են թէ ճամբորդների և թէ բեռների համար և այն՝ բոլոր ապրանքների նկատմամբ։ Որքան կը զարմանան ընթերցողներից շատերը, եթէ իմանան որ մի պուդ կերոսինը Բաքւից Բաթում տանելու համար՝ վճարւում է ոչ պակաս քան 19 կոպէկ։ Դա նամանաւանդ մեծ ծախք է, որ ամերիկացիք իրանց կերոսինը հասցնում են նաւահանգիստները նաւթանցքով, որ զարմանալի աժան է նստում. այդպիսով ամերիկական կերոսինը դուրս է գալիս Ամերիկայի մի նաւահանգստից գրեթէ այն գնով, ինչ նա նստել է իւր աղբիւրների տեղերում, մինչդեռ մեր կերոսինը դուրս է գալիս նաւահանգստից՝ արդէն ծանրաբեռնուած 19 կոպէկի ահագին ճանապարհածախքով։

Բայց անցնենք տարիֆի միւս յօդուածներին։ Ի հարկէ այսպիսի խնդիրներում միայն համեմատելով կարելի է վճիռ տալ, և մեր տարիֆը պէտք է համեմատել ուրիշ տարիֆների հետ։ Իբրև յենակէտ վերցնենք Խարկով-Նիկոլայեւսկեան երկաթուղու գները. այստեղից ցորենի մի պուդից վերցնում են $^1/_{29}$, գարուց $^1/_{32}$ կոպէկ մի վերստ տեղափոխելու համար, որ ասել է թէ մի կոպէկ տրւում է մի վերստին 29 և 32 պուդ տեղափոխելու համար, մինչդեռ մեր տարիֆով մի վերստին մի կոպէկ վճարւում է 25 պուդ ցորենի և 20 պուդ եգիպտացորենի (կուկուրուզ) համար։ Ալիւրի այնտեղ 26 պուդն է տեղափոխւում 1 կոպէկով մի վերստ, իսկ մեզանում 20 պուդը։ Թարմ միրգը այնտեղ 28 պուդն է տեղափոխւում մի կոպէկով մի վերստ, իսկ մեր երկաթուղով՝ 16 պուդը։ Զանազանութիւնը, որպէս տեսնում էք, շատ մեծ է։

Օրինակները բազմապատկել աւելորդ է. այդքանովն էլ պարզ է որ տրանսպորտը մեր երկաթուղիով շատ թանկ է նստում։ Բայց մի վերջին օրինակ էլ, եթէ կամենաք և աւելի շօշափելի օրինակ, և այս անգամ ճամբորդութեան տարիֆից։ Թիֆլիսից մինչև Բաքու 500 վերստ է, կամ մի տասնեակ աւելի։ Արդ,—շոսէ ճանապարհներին մեզանում մի ձիու և մի վերստի համար վերցնում են 3 կոպէկ, ուրեմն 500 վերստի համար՝ 15 րուբլի։ Եւ երեք հոգի ճանապարհորդելիս՝ վճարում են երեք ձիու համար, որ մի հոգու վերայ նոյնն է գալիս։ Արդ, Թիֆլիսից Բաքու գնալը երրորդ կարգով արժէ 11 ր. 11 կոպ., իսկ երկրորդով կրկնապատիկ աւելի՝ 22 րուբլի առաջնով խօմ՝ էլ աւելի թանկ։ Ճշմարիտ է որ կառքով ճամբորդելիս պահանջւում են նաև այլ ծախքեր՝ շոսէի փող, մաղուտի փող, կառապաններին նաչայ, բայց դորանով 15 ր. դառնում է 20 րուբլի և ոչ աւելի, ուրեմն մօտ այնքան, որքան երկաթուղու երկրորդ կարգի համար են պահանջում։ Բայց էլի փաստը մնում է փաստ, որ նոյն իսկ

երրորդ կարգի համար այստեղի երկաթուղին պահանջում է ամէն մի վերստին գրեթէ նոյնքան, որքան պահանջում են շօսէի տրակտների վերայ մի վերստի և մի ձիու համար։ Գոնէ զանազանութիւնը այս է՝ 11, 15, որ ասել է երեք քառորդ։—Եւ ոչ միայն շատ թանկ տարիֆ է նշանակուած ճամբորդների—պասաժիրների համար, այլ նոյն իսկ շատ քիչ ճամբորդական վագոններ ունի երկաթուղին։ Եւ իրօք, ինչ է նշանակում. որ 980 վերստ երկար գծի համար մեր երկաթուղին ունի, որպէս վերն էլ ասացի, ընդամենը 246 վագոն, որոնցից դեռ 17%, ուրեմն մինչ 40 վագոն 1890 հաշուի մէջ անպէտք են ցոյց տրուած։ Այժմ հասկանալի է այն զարհուրելի իրարանցումը, որին միշտ կարելի է ականատես լինել երրորդ կարգի վագոններում՝ ուր մարդիկ չը գիտեն ինչպէս տեղաւորուեն։ Աւելացրէք այդ ամենին և այն, որ մեզանում մշակ—բանւոր դասակարգի մարդիկ դեռ ես սովոր չեն մաքրասէր հասարակութեան ընկերութեան։ Մի խօսքով չափաւոր միջոցներով մարդիկ իրաւացի կերպով ամեն տեսակ տըրտունջներ կարող են յայտնել Անդրկովկասեան երկաթուղու վարչութեան՝ թէ չափազանց գների և թէ նեղուածքութեան նկատմամբ։ Թէ ինչ գներ են դոքա օրավարձ բանւորների համար—աւելի անգամ աւելորդ է։ Դոքա սարսափելի թանկ գներ են։ Ռուսաստանի ոչ մի երկաթուղու ճամբորդական տարիֆը այնքան թանկ չէ, ինչպէս մեզանում. և աւելին կ'ասեմ՝ ռուսաց մի ւս երկաթուղիների տարիֆը, առանց պետական հարկի (государственный сборъ) 50 տոկոսով, որ ասել է թէ կիսով չափ աւելի ցածր է մեր երկաթուղու տարիֆից։ Զարմանալի չէ ուրեմն որ ճամբորդական շարժումը մեզանում շատ ստոր է, քան Ռուսաստանի գծերից 27-ի վերայ, չը նայած որ, ինչպէս տեսանք, մեր երկաթուղին առաջիններից է ուրիշ շատ կողմերից։ Զարմանալի չէ ուրեմն, երբ 1890 թ. հաշուի մէջ կարդում ենք, որ այդ տարում ճամբորդների ընդհանուր թիւը կամ աւելի լաւ է ասել ծախուած տոմսակների թիւը եղել է ընդամենը 1,133,486 հատ։ Բայց հասկանալու համար թէ որքան ողորմելի թիւ է ներկայացնում այդ, պէտք է իմանալ որ ահագին մեծամասնութիւնը ճամբորդների միայն կարճ ճանապարհ գնալու համար են տոմսակ վերցրել, այնպէս որ միջին թիւը 1890 թւականին արուած ճամբորդութիւնների Անդրկովկասեան երկաթուղու վերայ կազմում է միայն 79 վերստ։ Իսկ քանի որ ամբողջ գի՛ծը Փոթիի ճիւղով ունի 980 վերստ, նշանակում է թէ ստատիստիքական հաշւով 901 վերստ ոչ մի ճանապարհորդին չի ծառայել։ Ողորմելի չէ այդ դրութիւնը, և ինչից այդ,—ճամբորդական տարիֆի չափազանց թանկ լինելուց։ Որ երկաթուղու կառավարութիւնը ինքն ես զգում է այդ հանգամանքից, այդ պարզ երևում է նրանից, որ բոլոր այն միլիոնաւոր ճանապարհորդներից տարեկան ստացած փողն է ամեն մէկից միջին հաշւով միայն 1 ռուբլի 17 կոպէկ։

Արդ, քանի որ երկաթուղին ֆինանսապէս լաւ դրութեան մէջ է,

ամենայն տեսակ ծախքերը և պարտաւորիչ վճարումները դուրս գալուց յետ դեռ $2^1/_2$ միլլիոն ազատ գումար է մնում, չի՞ վայելիլ արդեօք որ մտածեն թէ ապրանքների և թէ ճամբորդական տարիֆները իջեցնել, և դորանով երկրի տնտեսական յառաջդիմութեանը աւելի զօրեղ նպաստել?

Անկասկած է որ հարկաւոր է։

Մի զարհուրելի աղէտ է հանդիպել Ռուսաստանի մի մեծ մասին. 18 նահանգներում այս տարուայ հացահատիկների հունձը տեղ-տեղ խպառ ոչնչացել է, իսկ տեղ-տեղ միջին հունձից անգամ կիսից ստոր է։ Մինչդեռ հացահատիկի հունձը Ռուսաստանի տնտեսական կեանքում ամենաառաջին տեղն է բռնում։ Ցորենի հունձի այդ նշանակութիւնը տեղիք է տուել մինչև անգամ այս խօսքին թէ՝ Ռուսաստանում իսկական ֆինանսական մինիստրը՝ հացի հունձն է։ Երբ հունձը լաւ է՝ նաև պետական ֆինանսները լաւ են, երբ նա վատ է՝ նաև ֆինանսները վատ վիճակի մէջ են։ Ներկայ տարուայ նման վատ հունձ Ռուսաստանում սակաւ չէ պատահում, բայց այս անգամուանը շատ աւելի ծանրակշիռ է իւր ծաւալի պատճառով։ Մենք յիշում ենք Սամարի նահանգի «սովը», տասնուհինգ տարի առաջ, բայց այժմեանը, որպէս ասացի՝ մի նահանգի վերայ չէ տարածւում, այլ, որպէս հաղորդում են, 18 նահանգների վերայ, որոնց բնակիչների թիւը հասնում են 16—20 միլլիոն հոգի։ Այժմ, և արդէն մի ամսից աւելի՝ ռուսաց կառավարութիւնը կլանւած է կարօտեալներին օգնութեան հասնելու հոգսերով։ Արտակարգ միջոցների են դիմել թէ տէրութիւնը և թէ հասարակութիւնները ամբողջ Ռուսաստանում՝ կարօտեալներին օգնութեան հասնելու համար։ Կառավարութիւնը ձեռնարկել է վնասւած տեղերում հասարակաց շինութիւններ կառուցանելու, որպէս զի կարօտեալները կարողանան օրավարձ ստանալ և դորանով ապրուստ հայթհայթել. նաև օժանդակութիւն է արել աշնանային ցանքսերը ապահովելու համար։ Արգելել է հացահատիկի, մանաւանդ հաճարի (рожь) արտահանումը։ Ամենուրեք Ռուսաստանում ժողովարարութիւններ են անւում նոյն նպատակով. մի խօսքով մեծ աղէտի հոգսով բռնւած է դրականապէս ամբողջ Ռուսաստանը կառավարչական ամեն տեսակ հաստատութիւններով և ժողովրդով. մօտ թէ հեռաւոր։ Տայ Աստուած, որ Ռուսաստանը կարողանայ այդ փորձանքից ազատ դուրս գալ, որովհետև այժմեայ փորձանքին դիմանալու համար պահանջւում է որ պետութիւնը իւր բոլոր ուժերը լարէ։ Ռուսաստանի ներկայ ցաւին կարեկցում են ոչ միայն Ռուսաստանը իւր բազմացեղ ազգութիւններով, այլ և արտասահմանեան երկիրները, ուր, ինչպէս Պարիզում, Բերլինում, Լոնդոնում, ստորագրութիւններ են հաւաքւում յօգուտ Ռուսաստանի կարօտեալների։ Բայց ար-

դէն ժողովուրդը այն նահանգներից սկսել է ցրուել, և արդէն հեռաւոր Անդրկովկասն իսկ դաղթում են մեծ ու փոքր խմբերով, մանաւանդ Բաքու, Թիֆլիս, Բաթում, ուր սակայն մի՛շտ դործ ճարելը դժուար է, այնպէս որ դիմաւորապէս հասարակաց խնամատարութեան և կամ պատահարութեան միայն կարող են ապաւինել։

Այս տարուայ հունձի պակասութիւնը և դորա հետեւանք՝ ժողովրդի մեծ բաղձութեան հայից և սերմացանքից դուրկ լինելը պէտք է նոր ուժով հերթական խնդիր դարձնի՝ հասարակաց չամարանների կազմակերպութիւնը։ Ստոյդ անդեկութիւններ կան, որ Ռուսաստանում նոյն իսկ այս տարի շատ տեղ հասարակաց չտնմարաններից ցորենը ծախել են։ Որպէս միշտ լինում է, ամեն անդամ երբ վատ հունձեր են լինում, դուրս են գալիս մարդիկ, որոնք ամեն դնով անուն են ուղում ստանձել՝ առաջարկելով որ ցորենի արտահանութիւնը նաև առատ տարիներում արդիլեն կամ սահմանափակեն վարչական կարդադրութիւններով։ Վատ հունձի տարիներում՝ անդամ արդիլելը անհրաժեշտ է, բայց առատ տարիներում ուղենալ «կանոնաւորել» արտահանութիւնը—մի ցնորք է։ Ցորենը Ռուսաստանի ամենամեծ հարստութիւնն է և, եթէ չը լինէր ցորենի մեծ քանակութեամբ արտահանութիւնը—Ռուսաստանը ամենաողբալի վիճակի մէջ կը լինէր, որովհետև այդ երկիրը, չնորհիւ իւր մեծատարած հողերի՝ մշակում է հողը լատկապէս արտահանութեան համար։ Իմ ձեռքին է 1888 թուականի ստատիստիկան, որից երևում է, որ Ռուսաստանը այդ տարին արտահանել է 223,300,000 բուբլու սպիտակ ցորեն, մօտ 68 միլիոն բուբլու հաճար (рожь), ուրեմն միասին 291,300,000 բուբլու հաց։ Միմիայն տասը տարում արտահանութիւնը հասնում է 3 միլիարդի։ Ամեն դժբաղդ պատահարների դէմն առնելու համար բաւական կը լինէր Ռուսաստանի համար այդ դումարից, ուրեմն տասը տարում, միայն մի երկու հարիւր միլիոն բուբլու ցորեն պահել հասարակաց չտնմարաններում։ Իսկ այդ չի կատարւում ճշդութեամբ։ Այդ թուերից ամեն հասկացող մարդ այս եզրակացութիւնը պէտք է դուրս բերի, որ ոչ թէ ցորենի արտահանութիւնն է սով պատճառում Ռուսաստանում, այլ որ հէնց այդ արտահանութիւնն է, որ Ռուսաստանին կեանք է տալիս և դիւղացիներին ապրեցնում։ Չը լինէր այդ քանակութեամբ արտահանումը, որի վերայ պէտք է դեռ աւելցնել մօտ 50 միլիոն բուբլու արտահանուող դարին և 55 միլիոնի վարսակը, սպիտակ ցորենի և հաճարի հետ միասին ուրեմն մօտ 400 միլիոն, չը լինէր այդքան դումարի արտահանումը, ասում եմ ես, Ռուսաստանի դաշտերից ահագին տարածութիւններ կը մնային անմշակ, միլիոնաւոր դիւղացիք կը մնային անդործ և ստիպուած կը լինէին կամ սովից մեռնել, կամ մուրացկան դառնալ, կամ դաղթել։

Դեռ ևս նոյեմբեր-դեկտեմբերի 1890 թուականի քաղաքային վարչութեան կազմի համար սկսած աղմկալի ագիտացիան չարունակւում է մինչ այսօր։ Նոր դումայի անդամների ընտրութիւնները, քաղաքագլուխ ընտրելը, վարչական մարմնի անդամներ ընտրելը և այժմ վերջապէս քաղաքագլխի պաշտօնակատարի նոր ընտրութիւնը մի մի առիթներ էին, ուր ամեն տեսակ կրքեր՝ աղնուի հետ խառը նաև անազնիւ կրքերը իրանց ղերը խաղացին։ «Մուրճ»ի 1890 թ. դեկտեմբեր և 1891 թ. ապրիլ ամսւայ համարներում այդ ինդիրներին նուիրուած քրոնիկները մասամբ ծանօթացրին ընթերցողներին կուսակցական ուղղութիւնների հետ. և ահա այժմ ես կրկին պէտք է վերադառնամ նոյն խնդրին՝ քաղաքագլխի պաշտօնակատարի ընտրութեան առիթով։ Բայց նախ իրողութիւնը։ Մինչ այժմեայ պաշտօնակատարը քաղաքագլխի, սկսած ութ տարուց ի վեր, վերստին ընտրելով պ. Պօղոս Իղմայլեանն է։ Այժմ նորա ծառայութեան ժամանակամիջոցը լրացած լինելով՝ քաղաքային դուման պէտք է նոր ընտրութիւն կատարէր։ Սոյն հոկտեմբերի 12-ին կատարուեց առաջին անգամ ընտրութիւն։ Քաղաքային ինքնավարութեան սահմանադրութիւնով (պոլոժենիե) քաղաքագլխի պաշտօնակատարը ընտրւում է վարչութեան երեք անդամներից։ Բայց այն օրը վարչութեան երկու անդամները՝ նոր ընտրուած պ. Ապոլոն Իւանենկօ և պ. Խոսրովեան հրաժարուեցին քէարկուելուց, այնպէս որ քէարկուեց միայն մինչ այժմեայ պաշտօնակատարը՝ պ. Պ. Իղմայլեան։ Սա ստացաւ աւելի սև քան սպիտակ, ուրեմն չընտրուեց։ Հետևեալ նիստում՝ պէտք է նորից կատարուէին ընտրութիւններ։ Քաղաքագլուխը լայտնեց, որ պոլոժենիեով պարտաւորիչ լինելով վարչութեան բոլոր անդամների քէարկութիւնը քաղաքագլխի պաշտօնակատարի պաշտօնի համար՝ բայց անցեալ նիստում այդ կանոնը պահպանուած չը լինելով՝ անցեալ նիստում կատարուած քէարկութիւնը ապօրինի պէտք է համարել։ Այսպիսով քէարկութեան ենթարկուեցին վարչութեան բոլոր անդամները, դոցա մէջ և պ. Իղմայլեան։ Եւ ահա այստեղ է որ սկսւում է աղմուկը։

Պարոն Զուբալով և նորա հետ նաև բոլոր վրացի ձայնաւորները, առանց բացառութեան, պնդում են թէ մի անդամ արդէն սևացածը «իրաւունք» չունի նորից քէարկուելու։ Դորա հետ չեն համաձայնւում քաղաքագլուխը, ապա ինքը քէարկուող պ. Իղմայլեան և ձայնաւորներից բոլոր մնացածները։ Եւ ահա քէարկւում է պ. Իղմայլեանը միւս երկուսի հետ միասին։ Ներկայ էին նիստին 48 ձայնաւոր, որոնցից մասնակցեցին քէարկութեան պպ. Իւանենկօյի և Խոսրովեանի համար բոլորը, իսկ պ. Իղմայլեանի համար միայն 27 հոգի, որոնցից 23 հոգի սպիտակ քէ ուին, 4 հոգի սև քէ։ Պ. Իղմայլեանը ստացաւ աւելի սպիտակ քան միւս երկու քէարկուողները. և, բայի դորանից՝ միայն պ. Իղմայլեանը ստացաւ աւելի սպիտակ քան սև քէ։

խնդիր բարձրացաւ՝ պէտք է արդեօք պ. Իզմայլեանին ընտրուած համարել, թէ ոչ։ Այս խնդիրը անձնական խնդիր չէր, այլ զուտ կուսակցական։ Ներկայ դումայի ընդդիմադիր կուսակցութիւնը, օպպոզիցիան, ահա արդէն տասն ամիս է, ինչ քայլ առ քայլ և անողորմ կերպով հալածում է նախկին վարչութեան անդամներին։ Կուսակցութիւնը, հետևելով կատարելագործուած տակտիկայի, այն է՝ միաբանութեան, կարողացաւ ույժ ստանալ և աշխուժով լրացնել իր թուի պակասը։ Այդ միաբան և արթուն գործունէութեան առաջին մեծ հետևանքը եղաւ այն, որ նորից ընտրուած քաղաքագլուխ պ. Մատինով իրան ստիպուած տեսաւ հրաժարուել իր պաշտօնից։ Ընտրուեց նոր քաղաքագլուխ՝ իշխ. Երկայնաբազուկ Արղութեան։ Այդ մասին տես «Մուրճ» 1891 № 4 քրոնիկ։ Բայց կուսակցութիւնը իր վերջնական գործը տարած չէր լինիլ, եթէ այժմեայ վարչութեան անդամ և քաղաքագլխի պաշտօնակատար միայն պ. Իզմայլեան, քանի որ նախկին վարչութեան ոգին էր նա։ Թէ ինչ անձնաւորութիւն է նա, ես նոր բան չունեմ աւելացնելու այն բոլորի վերայ, ինչ արդէն ես ասել եմ նորա մասին «Մուրճ»-ի վերը յիշած համարի քրոնիկում։ Ուրեմն, ինչ էլ որ լինէր պ. Իզմայլեան, ընդդիմադիր կուսակցութեան համար հարկաւոր էր նորան հեռացնել։ Ահա ինչով պէտք է մեկնել այն սոփեստութիւնները որոնց պատրաստ է դիմել ընդդիմադիր կուսակցութիւնը պ. Իզմայլեանի քուէարկւելը ապօրինի համարել տալու համար։

Ես պէտք է հէնց այստեղ և եթ իմ կարծիքը յայտնեմ, որ պ. Իզմայլեանի քուէարկւելը ապօրինի չէր։ Միմիայն խնդիր կարող է լինել այստեղ այն թէ՝ ընտրուած է նա թէ ոչ, եթէ նորա ընտրութիւններին մասնակցել են միայն 27 հոգի, այսինքն դումայի բոլոր ձայնաւորների թուի կէսից պակաս։

Բայց ընդդիմադիր կուսակցութիւնը անվաւեր էր համարում ոչ այդ օրինական պատճառով, այլ յայտարարելով, որ իբր պ. Իզմայլեանը *իրաւունք* չունէր նախորդ նիստում սևացած լինելուց յետ՝ նորից քուէարկւել։ Դա սխալ է։ Եւ երանի թէ դա միայն սխալ լինէր, որովհետև դա սխալ չէր, այլ սոփեստութիւն, պարլամենտական ֆորտէլ, ինչպէս այդ շատ լաւ ըմբռնել էր ձայնաւոր պ. Աւգար Յովհաննիսեան, որը կուսակցութիւնը զինաթափ էր արել մի ուրիշ, նոյնքան անպատուաբեր մի պարլամենտական ֆորտէլով։

Քաղաքային պոլոժենիեն պահանջում է որ քաղաքագլխի պաշտօնակատար ընտրուի միայն վարչութեան անդամներից։ Արդ, երևակայեցէք որ վարչութեան բոլոր երեք անդամները մի նիստում աւելի սև ստանան, քան սպիտակ, ուրեմն բոլոր երեքն էլ չընտրուեն մի նիստում։ Չէ որ քաղաքային պոլոժենիեի պահանջի համեմատ այնուամենայնիւ այդ երեքից մէկին պէտք է ընտրեն, ուրեմն չէ որ հետևեալ նիստում բոլոր երեք *սևացածները* նորից պէտք է քուէարկուեն։ Ուրեմն եթէ պ. Իզմայլեանը

մի անգամ սնանալ, չէ որ նա իրաւունք ունի երկրորդ և մինչև անգամ երրորդ անգամ քւէարկելու, քանի որ նորա ընկերակիցներից ոչ ոք ընտրուած չէ։

Այն իրողութիւնը, որ ընդդիմադիր կուսակցութեան պարագլուխ պ. Զուբալոնն էր պահանջում որ Իզմայլեանը հեռացնէր քւէարկութիւնից, այդ իրողութիւնը, ասում եմ, չատ վատ գոյն է տալիս նորա կուսակցութեանը առհասարակ։ Եւ ոչ միայն պ. Զուբալոնն է հետեւել անվայել միջոցների՝ հակառակորդին ասպարիզից հեռացնելու համար, այլ և այդ կուսակցութեան գլխաւոր օրգան՝ Նովոյե Օբոզրենիե։ Եւ իրօք, այդ թերթի № 2695 տպուած Учетъ большинства յօդուածում, յօդուածագիրը ուզում է քաղաքային պոլոժենիելի բոլոր յօդուածների իմաստը չուռ ու մուռ տալ որ միայն ապացուցի Իզմայլեանի ընտրուած չը լինելը։ Օիշեալ թերթի յօդուածագիրը հարկէ համարում ծուռ կերպով հասկացնել ընտրող (избиратель) խօսքի, նշանակութիւնը։ Նա յայտնում է, թէ ընտրուած լինելու համար, իբր ըստ օրէնքի, ոչ միայն պէտք է ստանալ երկու երրորդը քւէարկութեան մասնակցած ձայների, թէկուզ այդ մասնակցողների թիւը լինէր գումարի անդամների թւի կէսից աւելին, այլ իբր թէ պէտք է ստանալ գումարի դահլիճում ներկայ եղող ձայնաւորների թւի երկու երրորդը, թէկուզ ներկայ եղողներից ոմանք մասնակցած էլ չը լինեն քւէարկութեան։ Սա կ'ապացուցանեմ, որ Նովոյէ Օբոզրենիեն զորանով փորձ է անում անկարելի դարձնել քաղաքային ինքնավարութեան գործունէութիւնը և ստիպել, որ մեծամասնութիւնը հպատակի մի փոքրամասնութեան կամքին։ Այդ պարզ հասկանալու համար ես կը վերցնեմ մի զէպք։ Ներկայ են նիստին 72 հոգի ձայնաւորներ, որոնց թւում դիցուք հէնց 25 հոգի վարչութեան հակառակորդներ։ Այժմ երևակայեցէք որ քւէարկւում է պ. Իզմայլեան և այդ քւէարկութիւնից յետ են կանգնում այն 25 հոգին, ուրեմն ընտրութեան մասնակցում են ոչ 72 հոգի ներկայ եղող իրաւասուները, այլ 47 հոգի։ Այդ 47 թւի երկու երրորդից աւելին՝ 40 հոգի՝ սպիտակ են տուել, 7 հոգի՝ սև։ Արդ այդ դէպքում պ. Իզմայլեանը ընտրուած է թէ ոչ։ Նովոյե Օբոզրենիեն կ'ասի ոչ, որովհետև 40 թիւը չի կազմում 72 ներկայ եղողների երկու երրորդը. և ինչու կ'ասի նա այդ,—այն պատճառով որ նա ընտրող (избиратель) համարում է ոչ թէ ընտրութեան մասնակցել ցանկացողներին, այլ նոցա, որոնք ներկայ են դահլիճում, թէկուզ սոցանից ոմանք յայտարարեն իսկ թէ չեն մասնակցում։

Ապացիսով ինչ դուրս կը գայ։ Այն, որ 25 հոգի փոքրամասնութիւնը իր վետոն կարող է դնել գումարի ձայնաւորների ահագին մեծամասնութեան վրիւներին, եթէ այդ 25 հոգին ցանկանան ամեն դէպքում յետ կանգնել քւէարկութիւնից։

Պարզ չէ արդեօք թէ ինչ ոստայններ է հիւսել ցանկանում ընդդի-

մաղիր կուսակցութիւնը, որպէս զի անկարելի դարձնի քաղաքային դումայի գործունէութիւնը և հարկադրել մեծամասնութեան հնազանդել իրան՝ փոքրամասնութեան?

Անցեալ ամսւայ քրոնիկում ես պատմեցի ներկայ 189¹/₂ թւականի հայկական թատրոնի ծագումը, թատրոնական յանձնաժողովի կազմելու պատմութիւնը, մի քանի խօսքով գծագրեցի ներկայ թատրոնական խմբի բնաւորութիւնը և կազմած բեկերտուարի ուղղութիւնը։ Այդ յօդւածից դէս ներկայացրին Նեւեժինի «Երկրորդ երիտասարդութիւնը», Լուզիա Կամոլետտիի «Քոյր Թերեզա», «Պարիզի աղքատներ», Շէքսպիրի անլսւա հեղինակի «Մի կնոջ սանձահարումն»։

Այդ բոլոր պիեսները աննշան պիեսներ են ըստ բովանդակութեան. նոցա դնելը մեր բեմի վերայ ներելի են, բայց միայն մի պայմանով, որ իրար չը յաջորդեն, այլ աւելի կարևոր պիեսների միջանցքներում տրւեն։ Այդ չորսից, ըստ երևոյթին, Նեւեժինի «Երկրորդ երիտասարդութիւնը» յաւակնութիւն կարող է ունենալ լուրջ պիեսների շարքում դասւելու, և թեման էլ իրաք լուրջ է, բայց այնպէս, ինչպէս Նեւեժինն է այդ թեման մշակում՝ նորան անաջող պիեսներից պէտք է համարել։ Մի հայր, որը չի ատո՛ւմ իւր կնոջ, այլ միմիայն նորից երիտասարդական կեանք վարելու համար՝ սկսում է սիրել մի ջաւէլ օրիորդի, որի համար թողնում է իրանց բազդին թէ իւր կնոջ և թէ զաւակներին. մի օրիորդ որը չի սիրում արդէն 45 տարեկանը անցած մարդուն, և լուրջ աղջիկ է դուրս բերւած՝ համաձայնւում է ապրել նորա հետ. մի երիտասարդ, այն պարոնի որդին, զայրացած իւր մօրը և ընտանիքին հասցրած անպատւութեան վերայ՝ իւր հօր տմարդի վարմունքի պատճառով՝ սպանում է հօր սիրեկանին և հաշտւում իւր անպատիւ հօր հետ—ահա ալեպիի տեսարաններ են լքցնում Նեւեժինի պիեսը, որը անհասկանալի է մնում և չի բացատրւում թէ ինչն է իսկապէս պիեսի միտքը։ Իսկ եթէ ուզենալու լինենք անպատճառ մի միտք դուրս բերել պիեսից, այդ թերևս այն է, որ Նեւեժինը բողոքում է քրէական օրէնսդրութեան դէմ, որը պատժում է երիտասարդին իւր հօր սիրեկանին սպանելու համար։ Այդ է գոնէ դուրս գալիս լոգիկայից մի պիեսի, որի միակ օգուտը այն էր, որ ցոյց տւեց թէ որքան արտիստական նրբութեամբ գիտէ կատարել տ. Սիրանոյշը տանջւող մօր դերը և որքան իւր տեղին էր պ. Աբէլեանցը բեզոնեօրի դերում։ Պէտք է կարծել որ այդ երիտասարդ դերասանի ամպլուան դորանով սկսում է որոշւել՝ նորա ամպլուան—բեզոնեօրի դերն է երևում։

Շէքսպիրի «Մի կնոջ սանձահարումը» պիեսը, որքան և մեծ հեղինակի թող գրւածքներից լինի, բայց և այնպէս արժէր որ հասարակութեան աչքի առաջ դնէր։ Այդ տեսակ պիեսներ կարելի է կրկնել միայն

երկար ժամանակամիջոցներում—մի քանի տարում մի անգամ—գլխաւորապէս այն հասարակութեան համար, որ տեսել է Համլէտ, Օթելլօ, Թագաւոր Լիր և այլն, մեծ հեղինակի հետ աւելի լիակատար ծանօթացնելու համար։ Շէքսպիրից կարելի է գնել առայժմ նաև «Վինձորի ուրախ կանայք»։ Մի կնոջ սանձահարումն պիեսի մէջ Շէքսպիրը, բայց այս անգամ չափազանց մերկ կերպով, հանդիսանում է իբր մի հեղինակ, որը հուժկու ուժով պատռում է հասարակութիւնից ընդունւած ամեն մի պատշաճութիւն (приличие) և իւր հերոսներին խօսեցնում այնպիսի բարբարոս խօսքերով և ձևերով, որպէս «վայել է» միայն ապացուցանելու համար թէ «ուժը յարգում է միայն ուժը, ուժը խոնարհւում է միայն ուժի առաջ», լինի այդ ֆիզիքական աշխարհում թէ բարոյական աշխարհում։ Շեքսպիրի այդ գրւածքը մի զաւեշտական կատակերգութիւն է, ամենամեծ ծայրահեղութիւններով ու կոշտ ու բիրտ կոնտրաստներով տիպերի մէջ։ Բայց թէ ինչ տրամադրութեան մէջ է գրել Շէքսպիրը իւր այդ տարօրինակ գրւածքը, այդ երևում է պիեսի ներածութիւնից, որը Շէքսպիրի ժամանակ ներկայացնում էր, իսկ այժմ չի ներկայացնւում։ Ահա այդ ներածութեան կարճ բովանդակութիւնը, որը թերևս շատերին յայտնի չը լինի։ Կաթսաներ կլեկող մի մարդ պանդոկում հարբում է, կռւում տիրուհու հետ, դուրս գալիս և ձգւում փողոցում ու քնում։ Գալիս է մի անգլիացի լորդ իւր սւիտայով որսից։ Համոզւելով որ պարկածը մեռած չէ այլ հարբած, լորդի մէջ միտք է յղանում այսպիսի մի հանաք խաղալ խեղճի գլխին. ամբողջ պլանը առաջուց կազմելով, նա հրամայում է որ հարբածին տանեն իւր պալատը, պարկեցնեն իշխանական փափուկ անկողնու վերայ. երբ յետոյ նա արթնանում է, լորդի զգաստացած ծառաները գալիս ու իրանց պատրաստութիւնն են յայտնում կատարել «լորդի» կամեցածը։ Խեղճ կլէկչին զարմանում է, չի հասկանում թէ ուր է և թէ ինչու նորան լորդ են անւանում. ոտով գլխով ուզում է համոզցնել ծառաներին թէ ինքը կլէկող մարդ է, իւր անունն է այս ինչ հասարակ անունը, իւր բարեկամներն են այս ինչ հասարակ մարդիկ և այլն։ Ծառաները պատկառանքով պատասխանում են թէ «լորդը» 15 տարի քնած է եղել և թէ այդ իւր երկար քնելու պատճառով «տիկինը», «մադամը» շատ ցաւում է եղել։ Նա թէ՝ իմ կինս հասարակ կնիկ է, «մադամ» չէ և այլն և այլն։ Ծառաները, որոնց մէջ և իսկական լորդը, չեն համոզում նորան, այնպէս որ խեղճ կլեկչին սկսում է կամաց կամաց հաւատալ թէ ինքը իրօք լորդ է և որ բոլոր իւր գիտեցածը միայն երազ է եղել ու հրամայում է կանչել «մադամին»։ Գալիս է լորդի պաժը, մի գեղեցիկ պատանի՝ կնոջ շորեր հագած և ներկայանում իբր «լորդի» կինը, և վշտահար դէմքով ասում թէ այդ 15 տարին նորան թւել է 30 տարի և որ այժմ շատ ուրախ է որ քնից արթնացել է։ Երևակայող լորդը ապա հրաւիրում է իւր «կնոջը» շորերը հանել ու գալ իրա հետ պարկել։ «Կինը» սակայն, դժւար դրութիւնից դուրս գալու հա-

մար, առարկում է թէ Ներողութիւն կ'անէ, բժիշկները պատուիրել են դեռ չորս գիշեր իւր կնոջ հետ չը լինել։ Այդ ժամանակ ծառաները, նախագծած պլանի համեմատ, գալիս ու լալտնում են «լորդին» թէ դերասանները, նորա առողջանալու առիթով, եկել են ներկայացում տալու և «լորդի» տիրութիւնը փարատելու։

«Դորա համար թւաց մեզ լաւ որ դուք այս խաղը տեսնէք

«Եւ ձեր ուշքը նոցա ուրախ կատակի վրայ դարձնէիք։

«Դորանով է որ ցաւը կ'անցնի, կեանքը երկար-երկար կը լինի», ասում են ծառաները։

Եւ խեղճ Քրիստոֆլ Շլաու, լորդի դիրքի մէջ ընկած խեղճ կլէկչին, «կնոջը» կողքին նստացրած, պատրաստւում է ժողովրդական մի խաղ տեսնելու։ Բայց «կինը» հաւատացնում է թէ ինչոր կը ներկայացնեն՝ աւելի լաւ բան կը լինի քան նա կարծում է և որ դա՝ մի տեսակ պատմութիւն է։ Շլաու ասում է՝—«Դէհ մենք այդ կը տեսնենք։ Արի, ամադամ տիկին», նստիր կողքիս և թող որ աշխարհքս իւր ճանապարհով գնայ. երիտասարդութիւն այլ ևս մենք երկրորդ անգամ տեսնելու չենք»։

Եւ ներկայացնում են՝ «Ամբոստ կնոջ սանձահարումն», որի բովանդակութեան վերայ աւելորդ եմ համարում կանգ առնել։

Ի վերջոյ հետեւեալ կառավարչական նոր կարգադրութիւնները։ Երդման խնդիրը առ այժմ վճռւած է այսպէս, որ հայ-լուսաւորչականներին այսուհետև պէտք է երդեցնեն ոսաց լեզուով, բայց ոչ թէ քահանայի մօտ, այլ դատաստանական նախագահի, մօտ, իսկ եթէ զինուորական ծառայութեան համար է՝ զինուոր. վարչութեան առաջ. ուսերէն չը գիտենալու դէպքում՝ թարգմանի միջոցով պէտք է նոյնը կատարւի։ Այդ կարգադրութիւնը եղած է համաձայնութեամբ ներքին գործերի և զինուորական մինիստրների։

Մի այլ կարգադրութիւն վերաբերում է Էջմիածնի ս. Սինոդի անդամների փոփոխութեան։—„Кавказъ“ լրագրում № 284, այդ իրողութիւնը հաղորդւած է այսպէս. «Բարձրագոյն հրամանով, կայացած 19 սեպտեմբերի, հայ լուսաւորչական սինոդի անդամներ՝ Սուքիաս Պարդեանց և Ներսէս Խուդավերդեանց եպիսկոպոսները, իրանց ապօրինի գործողութիւնների համար, արձակւած են իրանց բոլոր պաշտօններից և հեռացրած են՝ առաջինը Օրլովի, իսկ երկրորդը՝ Պոլտավայի նահանգները։ Միևնոյն ժամանակ հրամայւած է՝ Էջմիածնի սինոդի անդամների թափուր մնացած տեղերը նոր անդամներով լրացնելուց յետոյ, պարտաւորացնել սինոդը՝ վերաքննել այն բոլոր գործերը, որոնք և պատճառ եղան սինոդի պրոկուրորի արած բողոքներին»։

Միւս կողմից „С.-Петербургскія Сенатскія Вѣдомости“ լրագրի № 82 (հոկտեմբ. 11) տպված է հետևեալ բարձրագոյն հրամանը. «Թագաւոր կայսրը ներքին գործերի մինիստրի ամենահպատակ զեկուցման հիման վերայ, սեպտեմբ. 19 ին ներկայ 1891 թ., բարձրագոյն հրամայել բարեհաճեց՝ հաստատել հայ-լուսաւորչական եպիսկոպոսներին՝ Արիստակէս Սեդրակեանին, Գրիգորիս Աղանեանցին և Բարդուղիմէոս վարդապետ Գէորգեանին, որպէս Էջմիածնի հայ-լուսաւորչական սինոդի անդամներ».

Ա. ԼՈՒՍԻՆԻ